սիւները, պիտի կործանէ Լիւդի եկեղեցին և սիւները պիտի գործածէ մզկիթի շինութեան։ Քրիստոնեաները դուրս կը հանեն պահուած սիւները։ Անոնք շատ նուրբ, բարձրագիր և գեղեցիկ էին։ Մզկիթին յատակը սալարկուած է մարմարով և բակը՝ ուրիշ քարով։ Դուռները շինուած են կիպարիս փայտէ և մայրիէ. քանդակազարդ էին և ըստ երևութին՝ շատ գեղեցիկ (Տե՛ս Palestine under the Moslems, էջ 303–305)»։

Այս անուանի երեք պատմիչներուն Ռեմլէի նկարագրութիւնները, զոր կը հաւաստեն Տիւրացի Կիյեօմ և Մարինոս Սանուդոս՝ կը հաստատեն թէ Ռեմլէի հիմնարկութիւնը արաբական է, եւ թէ հինէն ո՛եւէ քաղաքի հետք չկար։ Ուստի Ռեմլէն ոչ Արիմաթիան կրնար ըլլալ, և ոչ ալ Յովսէփ Արիմաթիացիին հայրենիքը. և այսպէս Արիմաթիացիին անուամբ, Ռեմլէի մէջ ո՛եւէ սրբբավայրի կառուցումը պատմականօրէն ճշդութենէ զուրկ կ'ըլլար. այս պատճառով կրնանք ըսել թէ Լատինք վաւերական աւանդութեան մը վրայ յենլով չէ որ Ս. Յովսէփ Արիմաթիացիի անունով եկեղեցի կառուցած են Ռեմլէի մէջ և աւանդավէպ յորինած Արիմաթիացիին և Նիկոդիմոսի շուրջ։

3. Խաչակրաց եկեղեցիները Ռեմլէի մէջ.

Խաչակիրները 28 Մայիս 1099ին Ռեմլէ և Լիւդ հասան. բոլոր մերձաւոր դրացիները և տեղւոյն բնակիչները փախուստ տուին. վասն զի անոնք չէին կրնար պաշտպանուիլ։ Լիւդի մէջ (Լիւդդա, Դիոսպոլիս) Յուստինիանոս հոյակապ եկեղեցի մը շինել տուած էր Ս. Գէորգի գերեզմանին վրայ. թշնամին քանդած էր զայն այրելով տանիքին մեծ գերանները. նոյն եկեղեցիին շինութեան աշխատած էին ընտիր քարահատներ։ Անապատացեալ երկու քաղաքները գրաւուեցան. նախ կողոպտեցին զանոնք, յետոյ հոն հաստատեցին Ռուէնի բնիկ Բոպէրդ լատին եպիսկոպոսը։ Ռամլէն, կ'ըսեն Gestes des Ciprois, մեծ և հարուստ եպիսկոպոսութիւն մ'էր. անոր ժողովուրդը Երուսաղէմէն աւելի բարգաւաճ վիճակ մը ստացած էր մշակութեան և հիւսուածեղէնի պարապելով։ Ի փոխարէն ռազմական դիրքը շատ վտանգաւոր էր, և Պաղտին Բ. 1102ին անոր փորձը առաւ. եթէ իսլամ էմիրնե-